Ծրագրի հիմնարար դրույթներ (ToR)

ԼԳԲՏՔԻ+ անձանց և/կամ նրանց կողմից ղեկավարվող փոքր բիզնես նախաձեռնությունների ենթադրամաշնորհային ծրագիր

1. Նախապատմություն

Հայաստանում ԼԳԲՏՔԻ+ անձինք հաճախ բախվում են տնտեսական ներառման համակարգային խոչընդոտների՝ խտրականություն աշխատավայրում, ֆինանսական ռեսուրսների սահմանափակ հասանելիություն և սահմանափակ հնարավորություններ ձեռնարկատիրության ոլորտում:

Հայտարարված փոքր դրամաշնորհային ծրագիրը նպատակ ունի հզորացնել ԼԳԲՏՔԻ+ անձանց՝ փոքր բիզնեսի ստեղծման և զարգացման համար ուղիղ ֆինանսական աջակցությամբ՝ ԼԳԲՏՔԻ+ համայնքի շրջանակներում տնտեսական անկախությունը, տեսանելիությունը և արժանապատվությունը խթանելուն ուղղված ջանքերի կարևոր մաս կազմելով:

2. Ֆինանսական աջակցության նպատակը

- Աջակցել ԼԳԲՏՔԻ+ անձանց՝ եկամտի ստեղծման կամ ընդլայնման նպատակով տնտեսական գործունեություն մշակելու կամ զարգացնելու գործընթացում,
- Նպաստել տնտեսական հզորացմանն ու կայունությանը,
- Խթանել ներառական և արդար ձեռներեցությունը,
- Խրախուսել այն բիզնես գաղափարները, որոնք նպաստում են բազմազանությանն ու ներառմանը,

3. Ֆինանսավորման ծավալը

Դրամաշնորհի չափը՝ մինչև €2,500 յուրաքանչյուր ընտրված նախագծի/նախաձեռնության համար:

Թույլատրված ծախսեր՝

- սարքավորումների ձեռքբերում,
- հումքի գնում,
- նախնական շուկայավորման ծախսեր,
- իրավական գրանցում,
- բիզնես տարածքի վարձակալություն,
- ցանկացած այլ հիմնավորված մեկնարկային/զարգացման ծախսեր:

Չթույլատրված ծախսեր՝

- անձնական ծախսեր,
- վարկերի մարումներ,
- գործունեություն, որը նպաստում է խտրականությանը,
- չգրանցված բիզնեսներ, որոնք ունեն բարձր իրավական կամ ֆինանսական ռիսկեր:
- ՀՀ ՔՕ հանցագործություն պարունակող գործունեություն:

4. Համապատասխանության չափանիշներ

Հայտատուները պետք է համապատասխանեն հետևյալ պայմաններին՝

1. Նույնականանալ՝ որպես ԼԳԲՏՔԻ+ համայնքի անդամ: Ինքնության մասին տեղեկացումից բացի՝ որևէ ապացույց ներկայացնել անհրաժեշտ չէ,
2. Լինել առնվազն 18 տարեկան դիմումը լրացնելու պահին,
3. Լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ ներկայացնել Հայաստանում առնվազն 1 տարի բնակության երաշխիք, և բիզնեսը ամբողջությամբ իրագործել Հայաստանում,
4. Էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնել հստակ բիզնես նախագիծ, որը ներառում է նպատակները, իրագործման պլանը և ակնկալվող արդյունքները,
5. Ապահովել խտրականությունից զերծ բիզնես վարքագիծ:

6. Պատրաստ լինել մասնակցելու մոնիթորինգի, բիզնեսի զարգացումների վերաբերյալ հաշվետվական գործընթացների, ըստ պահանջի:
7. Ենթադրամաշնորհին կարող են դիմել, որպես անհատ, իրավաբանական անձ կամ ՀԿ անկախ թիմի մեծությունից գումարը չի ավելանում:

Ուշադրություն՝

Առաջնահերթություն կտրվի այն հայտատուներին, որոնք նախկինում չեն ստացել ֆինանսավորում և/կամ նյութական և ոչ նյութական աջակցություն այս կամ նմանատիպ ծրագրերի միջոցով:

5. Ընտրության գործընթաց

Հայտերի գնահատումն իրականացվելու է անկախ՝ ընտրող հանձնաժողովի՝ ՆՍՀԿ խորհրդակցական խորհուրդի կողմից՝ հիմնվելով հետևյալ չափանիշների վրա:

- Բիզնես գաղափարի հստակությունն ու իրագործելիությունը;
- Հնարավոր ազդեցություն (տնտեսական և/կամ համայնքային);
- Ներառականություն և էթիկապես պատշաճ գործունեություն;
- Իրատեսական բյուջե և կայունության հեռանկար:

Ընտրված հայտատուները կարող են հրավիրվել կարճ հարցազրույցի և/կամ գաղափարի ներկայացման շնորհանդեսի:

6. Հաշվետվություն

- Ընտրված դրամաշնորհառուները պետք է ներկայացնեն կարճ նկարագրական և ֆինանսական հաշվետվություն (ենթադրամաշնորհի ստացումից 3 ամսվա ընթացքում համաձայն պայմանագրի).
- Ենթադրամաշնորհատուն պետք է ատրաստ լինի ծրագրի իրականացման և ստացված արդյունքների մասին ներկայացնի շնորհանդես համաձայն պայմանագրի:

7. Ժամանակացույց և դրամաշնորհի չափ

✓ Դրամաշնորհի հայտարարության սկիզբ	2025թ-ի օգոստոսի 15
✓ Հայտադիմումների ընդունման փուլ	2025թ. օգոստոսի 15-ից սեպտեմբերի 15-ը
✓ Գնահատում և ընտրություն	2025թ. -ի սեպտեմբերի 16-ից 30-ը
✓ Արդյունքների հրապարակում	2025թ. հոկտեմբերի 1-ից 6-ը
✓ Իրագործման փուլ	Մինչև 3 ամիս դրամաշնորհի ստացումից հետո
✓ Դրամաշնորհի առավելագույն չափ	2,500 եվրո

Ուշադրություն՝ յուրաքանչյուր անհատ կամ թիմ կարող է ներկայացնել միայն մեկ դրամաշնորհային ծրագիր, թիմով դրամաշնորհային ծրագրին դիմելը ողջունելի է, բայց գումարի առավելագույն չափը չի կարող փոփոխվել:

8. Ինչպե՞ս դիմել

Հայտերը պետք է ներկայացվեն մինչև 2025թ. -ի սեպտեմբերի 15-ը՝ էլեկտրոնային հայտադիմումով:

8. 1 Կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

- Բյուջե
- Ժամանակացույց
- Անձը հաստատող փաստաթղթի էլեկտրոնային պատճենը
- Իրավաբանական անձի դեպքում համապատասխան վկայականի և կանոնադրության էլեկտրոնային տարբերակը

8. 2 Կոնտակտային տվյալներ

Հարցերի կամ դիմումների հետ կապված խնդրում ենք կապ հաստատել գրավոր՝ նամակ ուղարկելով հետևյալ էլ-հասցեին՝ contact@ngngo.net

www.ngngo.net

Ելնելով ՆՍՀԿ ոնթացակարգերից և տեխնիկական հնարավորություններից՝ մրցույթի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն կտրվի միայն այն հայտատուներին, որոնց հայտերը կհաստատվեն:

Իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ: